ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ‹‹ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ››, ‹‹ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ›› (‹‹ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ՝ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ››), ‹‹ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ (ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ)››, ‹‹ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆ ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ›› ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

քսանվեցը մայիսի 2020 թվական

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն ու 287-Ն որոշումները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրշադյանի (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 30.03.2020 թվականի տրված թիվ Ն/ՍԱԾ/8605-2020 լիազորագիրը) (այսուհետ՝ Նախարարություն), և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Միեր Անանյանի (այսուհետ՝ Բանկ) (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **2020 թվականի հուլիսի 01-ից** լուծել Նախարարության (Սոցիալական ապահովության ծառայության) և Բանկի միջև կնքված ‹‹Խնամքի նպաստն անկանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման›› (‹‹Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարի՝ անկանխիկ եղանակով վճարման ծառայությունների մատուցման››), ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման››, ‹‹Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման)››, ‹‹Մայրության նպաստն անկանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման›› պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագրեր) և դրանց անբաժանելի մասը կազմող բոլոր համաձայնագրերը:

2. Պայմանագրերի լուծելու օրվա դրությամբ դրանցով ստանձնած պարտավորությունները Բանկի կողմից պատշաճ կատարելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

2.1. ‹‹Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 4-րդ կետի 13-րդ ենթակետում

նշված տեղեկատվությունը (2-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գումարի համար,

2.2. ‹‹Մայրության նպաստն անկանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված գումարի համար,

2.3. ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2.3.8-րդ ենթակետում նշված տեղեկատվության (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 5-10-րդ ենթակետերում նշված գումարների համար, **ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284 որոշման շրջանակներում՝** ժամկետը սահմանել 2020 թվականի հոկտեմբերի 1-ը՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման N 2 հավելվածի 2.3.5-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը ներառյալ,

2.4. ‹‹Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարի՝ անկանխիկ եղանակով վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ համաձայնագիրը կնքելու օրվա դրությամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու ամիսը ներառյալ:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

4. Սույն համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13	Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շ., թիվ 85
Հեռ. 060-654-002	Հեռ. 010-59-23-23
Էլ. փոստ info@ssa.am	Էլ. փոստ araratbank@araratbank.am ՀՎՀՀ 02500518
Սոցիալական ապահովության ծառայության պետ **Անի Ամիրշադյան**	**Գործադիր տնօրեն** **Միեր Անանյան**
(ստորագրություն և կնիք)	(ստորագրություն և կնիք)